

ԻՆՉ ՍՊԱՍԵԼ 2017Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Մայիսին ընդունված նոր ընտրական օրենսգիրքը հրատապ կարգով ենթարկվեց փոփոխության:

1. Մատնահետքերի համադրությամբ ընտրողների գրանցում կարող է և չլինել, տեղամասերը համապատասխան սարքերով ապահովելու հնարավորության բացակայության պատճառով, ինչի փոխարեն հրապարակվում են քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակները և այլոց փոխարեն քվեարկությունների դեպքում քրեական պատասխանատվություն է նախատեսվում :

2. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կառավարության կողմից սահմանված կարգով անցկացված մրցույթի արդյունքում ընտրված մասնագիտացված կազմակերպությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլատրում է իրականացնել բոլոր ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի եւ քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանում եւ միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի (երի) միջոցով: Ինչը նույնպես կարող է և չլինել:

Նշված փոփոխությունները կարող են նվազեցնել տեղամասերում քվեարկության և քվեների հաշվելու ընթացքում կեղծարարության հնարավորությունները:

Սակայն դժվար է սպասել ազատ արդար և մաքուր, առանց ընտրակաշառքների, ընտրություններ հաշվի առնելով՝ 1. Այն որ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որպես նոր հանձնաժողով, ընտրվեց նույն կազմով այն անդամներով ովքեր գործել են, նախորդ կեղծված ընտրությունների և հանրաքվեի ժամանակ: 2. Տեղական ինքնակառավարման մարմինների Գյումրի և Վանաձոր քաղաքների ընտրությունների պատկերն անարդար ընտրությունների մտահոգություն է առաջացնում: Նկատի ունենալով ընտրական թվերի անհամապատասխանությունները բազմաթիվ տեղամասերում, քվեարկության կարգի խախտման և տեղամասերից դուրս տեղի ունեցաց գործառույթների ու իրադարձությունների վերաբերյալ հաղորդումները, դժվար է ասել թե Գյումրի և Վանաձոր քաղաքների համամասնական ընտրություններն արդար էին ազատ ու մաքուր: Չնայած որ այս անգամ տեղամասերում չեն եղել բացարձակ ու բացահայտ կեղծիքներով քվեարկության գործառույթներ, ինչպես եղել է առաջ: Բայց որ նշված քաղաքներում, ըստ արդյունքերի, իշխող կուսակցությունը միայնակ իշխելու համար անհրաժեշտ մեծամասնության քվեները չկարողացավ ապահովել բայց և այնպես վերցրեց իշխանությունը, օրենքի բարդ և խրթին ձևակերպման հետևանքով, փաստ է:

Զավեշտն այն է, որ նշված քաղաքներում մասնակցության ցածր տոկոս է եղել և քվեների մեծամասնությունը ստացել են իշխող ու իբր ընդիմություն հանդես եկող, բայց իրականում իշխող կուսակցության հետ միասին ընտրակեղծարարությամբ ու բռնության ու մարդասպանությունների արդյունքում նախագահի պաշտոնը զբաղեցնողին պաշտպանած կուսակցությունները, որոնք բոլոր ընտրություններից առաջ հանդես են եկել ու գալու են որպես ընդդիմություն:

Եթե հաշվի առնենք, որ Հայաստանի գործող նախագահը միանձնյա է տնօրինում քաղաքական դաշտը և ցանկացած գնով իշխանությունը պահելու հնարավորությունը

բաց չի թողել ու չի թողնի, քանի դեռ Ռուսաստանի նախագահը նրան կարմիր քարտ ցույց չի տվել, ապա գործող նախագահը փորձելու է իր ձեռքում պահել հաջորդ իշխանությունը, պաշտոնավարման ժամկետից հետո նույնպես, առաջիկա պառլամենտական ընտրություններում մանիպուլացնելով քաղաքական դաշտը ապահովելով իր թիմի՝ իր կուսակցության և իր իբր ընդդիմության մեծամասնությունը, վերջիններիս նորից իշխանության մաս կազմելու հնարավորություն տալով: Ինչը հնարավոր է Հայաստանում մնացած ժողովրդի մի զգալի հատվածի աղքատության ու առաջիկա ընտրություններում ձայնավաճառության պատրաստակամության ու մեծամասնության պետությունից հիասթափության արդյունքում:

Հարց է, եթե հասարակության մեծամասնությունը չսխալվի ու առաջիկա ընտրությունները չշփոթի մինչ այժմ եղած պառլամենտական ընտրությունների հետ: և առաջիկա ընտրություններն ընկալի որպես պետության առաջին դեմքի՝ իրական ղեկավարի ընտրություն, հետևաբար դեմ քվեարկի նախագահին, նրա կուսակցությանն ու նրան ծառայող իբր ընդդիմությանը, այսինքն քվեների մեծ մասը տա նրանց ովքեր չեն եղել իշխանության մեջ ու չեն համագործակցել վերջինս հետ և պատրաստ են դատել նրան, ինչը քիչ հավանական է, ապա հնարավոր չէ արդյոք խոշորամասշտաբ ընտրակեղծիքներն ու իշխանության բռնազավթումը: Հաշվի առնելով անցյալի փորձը պետք է նշեմ որ հնարավոր է, քանի որ իշխանության լծակները, ոստիկանությունը, խուժանն ու թիկնագորայինները նույնիսկ բանակի հրամկազմի զգալի հատվածը բավարար ուժ են և պատրաստ են ժողովրդի ըմբոստ հատվածին ճզմել ու խեղդել սեփական այրան մեջ, այլապես հո չեն գժվել որ գրկվեն իշխանությունից, ունեցվածքից, վախենալով որ կարող են գրկվել նաև ազատությունից:

Հիշենք 2008թ. մարտի մեկը, երբ բռնություն գործադրվեց ընտրակեղծիքների դեմ բողոքողների դեմ ու սպանեցին անմեղ մարդկանց:

Հիշենք դատաիրավական համակարգի քաղաքականացվածությունը, որի ներկայացուցիչները, առաջին հերթին ծառայում են նախագահին, երկրորդ հերթին սեփական շահերին, հետևաբար ի չիք են դարձնում պետականությանը, հասարակության շահերին, արդարությանն ու մարդկանց հիմնարար իրավունքներին ու օրենքին ծառայելու հնարավորությունը:

Հիշենք նաև ոստիկանության դաժանություններն ընդեմ ցուցարարների, որոնք հիմնականում հավաքվում էին նախագահին, նրա կուսակցությանն ու կառավարությանը կամ նրանց որոշումներին դեմ լինելը ցույց տալու համար:

Հարց է թե կընկալի արդյոք հասարակության մեծամասնությունը առաջիկա ընտրությունները որպես երկրի ղեկավարի ընտրություն, հետևաբար և կքվեարկի տվյալ պահին գործող նախագահին դեմ, ասենք անցած 1995 թվականից հետո եղած նախագահական ընտրությունների նման, թե հասարակության ոչ փոքր հատվածը պառլամենտական ընտրությունները որպես ռեալ իշխանության ընտրություն չի ընկալի: Բոլոր դեպքերում արդար ընտրությունների հարցը մնում է ամկախված և կարող է խաբկանք հանդիսանալ արևմուտքի համար, չնայած վերջիններիս՝ տեղական նրբություններից հեռու լինելու հանգամանքն ու սեփական շահերի կարևորությունը հաշվի առած, Հայաստանի արդար ընտրություններն առավել պետք չեն, քան Հայաստանին: Հայաստանին արդար ընտրություններ պետք են մինչ այժմ տեղի ունեցած

բոլոր՝ հատկապես 2016 թվականի իրադարձությունների ու դրանց հետևանքների պատճառով: Համառոտ թվարկենք՝ ապրիլյան պատերազմ, ժողովրդին ապստամբության հանելու մտադրությամբ <<Սասնա Շոեր>> զինված խմբի կողմից ոստիկանության գնդի տարածքի գրավում և նախագահի հրաժարականի պահանջի ներկայացում, հասարակության զգալի մասի աջակցություն <<Սասնա Շոեր>>-ին ընդդեմ իշխանությունների, ցույցեր ու հանրահավաքներ հասարակական լուրջ դժգոհություններ, քաղաքական նկատառումներից ելնելով բանտարկություններ, նոր կառավարության կազմավորում:

Ազգային ժողովում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը ներկայացնելիս նոր վարչապետը հայտարարեց՝ ելույթից մեջբերում <<Հայաստանի Հանրապետության կառավարության նպատակն է հանրապետությունում բարեփոխումների միջոցով ապահովել մեր երկրի գերագույն արժեքի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝

- պաշտպանվածությունը,
- արժանապատվությունը,
- կենսամակարդակի բարձրացումը,
- արդար հասարակության մեջ ապրելը,
- ապագայի նկատմամբ լավատեսությունը:

Այս նպատակները կարևոր են միշտ և ունեն կոնկրետ դրսևորումներ ցանկացած ժամանակահատվածում: Կառավարության խնդիրն է՝ վեր հանել դրանց հասնելու խոչընդոտները և դրանց արդյունավետ կերպով լուծումներ տալ:>>

Հարց է թե ինչպես է լուծվելու այս պնդումներին համահունչ ամենակարևոր ու հիմնական արդար ընտրությունների խնդիրը, երբ պարզ է, որ եթե նախագահի համար ձեռնառու ընթացքով ընթանան քվեարկությունները, ապա տեղամասերում նույնիսկ քվեարկության և քվեների հաշվման ընթացքում մեծածավալ կեղծիքներ հնարավոր է որ չլինեն, բայց տեղամասերից դուրս ձայների առք, վարչական ռեսուրսների չարաշահում դժվար թե չլինի: Ինչ է ընտրակաշառքներ չեն լինելու, կամ տեղական հեղինակությունները՝ նաև ոչ լավ իմաստով, որոնք լինելու են իշխող կուսակցության ցուցակներում, քվեներ ապահովելու համար տեղամասից դուրս ցանկացած հնարքներով քայլերի չեն դիմելու: Կամ հետաքրքիր է թե ինչ նպատակ է հետապնդում ընտրական օրենսգրքում դիտորդների իրավունքների սահմանափակման արձանագրումը և նրանց հանձնաժողովի որոշմամբ տեղամասից հեռացնելու օրենքով ամրագրված նորմը, այդ թվում նաև այլոց փոխարեն քվեարկելու վերաբերյալ հայտարարության համար քրեական պատժի սահմանումը, եթե այն սխալմունք լինի: Պետք է ենթադրել, որ նշվածը ընտրակեղծիքների դեպքում դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների վրա ճնշման հնարք է, չէ որ ընտրախախտումներն ու ընտրական գործառույթներում տեղ գտած թերությունները հիմնականում անկողմնակալորեն արձանագրվում էին վերջիններիս կողմից:

Հետաքրքիր է թե իշխող կուսակցության ցուցակում որ տեղն է զբաղեցնելու վարչապետը և ինչպես կվարվի, եթե ընտրությունները կեղծվեն կամ լինեն ոչ արդար ու ընտրակաշառքներով:

Լավ կլինի, եթե նոր օրենսգրքով ամրագրված մեխանիզմներն արդյունավետ լինեն ընտրախախտումների կանխարգելման հարցում և գոնե քվեարկության ընթացքում կեղծիքներ չլինեն և քվեարկության արդյունքները չկեղծվեն: Իսկ եթե առաջիկա ընտրություններում ձայնավաճառների ու իշխանությունների, այդ թվում իբր ընդդիմություն հանդես եկող կուսակցությունների, կողմնակիցների քանակը գերազանցի իրական ընդդիմության կողմնակիցների, առանձնակի շեշտենք իրական ընդդիմության կողմնակիցների, քանակին, ապա պետք է հաշվի նստել այդ իրողության հետ և ընդունել, որ Հայաստանում առկա քաղաքացիների մեծամասնությունն այն է ինչ որ է:

Իհարկե լավ կլինեք, որ Հայաստանի քաղաքացիները կամ գոնե մարդկանց մեծամասնությունը ազատ պաշտպանված ու արժանապատիվ լինեին ու Հայաստանի ընտրությունների ելքը բացառապես կախված լինեք ընտրողների իրական ցանկություններից: Ինչի համար պետք է, որ սոցիալ տնտեսական պայմանները նորմալ լինեն և մանր ու միջին բիզնեսը մեծ տեղ զբաղեցնի տնտեսությունում, կոռուպցիայի մակարդակը չափազանց բարձր չլինի ու հասարակությունը չհանդուրժի այն, դատաիրավական համակարգը հիրավի անկախ լինի, իսկ ընտրողների զգալի հատվածը կախված չլինի մի քանի տասնյակ մարդկանց, իշխանությամբ օժտված, մոնոպոլիստների բարեհաճությունից:

Եթե էլեկտրոնային գրանցմամբ և էլեկտրոնային ստորագրությամբ քվեարկություն կազմակերպվեք Հայաստանի բոլոր, այդ թվում նաև այլ երկրներում գտնվող, քաղաքացիների համար, հետաքրքիր կլինեք թե ովքեք կհաղթեին, արևմուտքի կողմնակիցները թե ներկայիս ռուսաստանի: Նման քվեարկության դեպքում կարծում եմ որ իշխող կուսակցությունն իր ղեկավարի հետ միասին կպարտվեք, իսկ թե ով կհաղթեք դժվար է ասել, քանի որ քաղաքական գործիչների մեծ մասի, նույնիսկ աշխարհին հայտնի դրսի շատ հայերի, ինչու չէ նաև ժողովրդի զգալի հատվածի, վախճ ռուսաստանի գործող նախագահից չափազանց մեծ է, իհարկե ոչ անհիմն:

Իսկ թե ինչպիսին կլինեն առաջիկա ընտրությունները և ով կլինի իշխանության ղեկին ժամանակը ցույց կտա: Իսկ որ անկախ ամեն ինչից Հայաստանը որպես միջազգային իրավունքի սյուրեկտ չի վերանա ակնհայտ է, չնայած, որ դժվար թե մինչ Ռուսաստանի դեմոկրատացումն ու մեծապետական նկրտումների անցնելը, այսինքն՝ ուսական դեմոկրատական հեղաշրջումը, կարողանա դուրս գալ Ռուսաստանի՝ նույնիսկ զագպրոմ կազմակերպության, բացարձակ ազդեցության տակից ու դառնալ փաստացի անկախ: Եթե ժողովրդավարական, արդար ազատ և թափանցիկ ընտրություններ լինեն, ապա դա կնշանակի, որ իշխանությունն իրոք կպատկանի ժողովրդին, այլապես ոչ իրավական ու փաստացի Ռուսաստանից գերկախված պետության մեջ խոսել ինչ որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ Որպես գերագույն արժեքի մասին, անլուրջ է: